Դեկտեմբերի 24-ին Գյումրու Օյունջյան կրթահամալիրի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ Շիրակի մարզի խորհրդի ամփոփիչ նիստը, մասնակցությամբ ՀՀ Շիրակի մարզպետ Ֆելիքս Ցոլակյանի, մարզի թվով 117 համայնքների ղեկավարների, ուժային կառույցների և ԶԼՄ ներկայացուցիչների մասնակցությամբ: Օրակարգում ընդգրկված էին երեք հարց՝

1. Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների կատարման մասին.

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լիպարիտ Մարտիրոսյան.

2. Մարզում պետական բյուջեի և այլ ֆինանսական միջոցներով իրականացված շինարարական աշխատանքների մասին.

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ՝ Ալբերտ Մարգարյան

3. 2015 թվականին գյուղատնտեսության ոլորտում կատարված աշխատանքների մասին.

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան

Ստորև ներկայացնում ենք զեկույցներն ամբողջությամբ.

1. Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների կատարման մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լիպարիտ Մարտիրոսյան:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Շիրակի մարզի համայնքներում 2015 թվականի սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:

2015թ. դեկտեմբերի 23-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 90.8%-ով, նախատեսված 1,894,530.8 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 1,721,146.7 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է - 173,384.1 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2015թ. բյուջեների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի. /հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2015թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
Հողի Հարկ	379,930.9	321,725.5	- 58,205.4	84.7
Գույքահարկ	715,289.3	664,895.5	- 50,393.8	93.0
Պետական տուրք	50,070.0	50,085.0	+ 15.0	100.0
Տեղական տուրք	131,395.5	120,514.1	- 10,881.4	91.7
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	312,625.6	275,862.3	- 36,763.3	88.2
ա/ հողի վարձավճար	273,626.7	235,317.9	- 38,308.8	86.0
բ/ գույքի վարձավճար	38,998.9	40,544.5	+ 1,545.6	104.0
Այլ եկամուտներ	305,219.5	288,064.3	- 17,155.2	94.4
Ընդամենը սեփական եկամուտներ	1,894,530.8	1,721,146.7	- 173,384.1	90.8

2015թ. փաստացի հավաքագրվածի նվազման %-ը 2014թ. տարեկան փաստացի հավաքագրվածի համեմատությամբ կազմում է 5.4% կամ ծավալային առումով 2014թ. համեմատությամբ պակաս է հավաքագրվել 97,997.8 հազ. դրամ:

Ըստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

հ/հ	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2015թ. նախատեսված սեփական	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %

		եկամուտներ			
1	Գյումրի	1005559.6	974460.8	-31,098.8	96.9
2	Ախուրյան	338,153.6	278,844.1	-59,309.5	82.5
3	Արթիկ	244,786.7	224,511.6	-20,275.1	91.7
4	Անի	147,908.5	120,161.7	-27,746.8	81.2
5	Ամասիա	80,923.9	59,561.9	-21,362.0	73.6
6	Աշոցք	77,198.5	63,606.6	-13,591.9	82.4

Մարզի նախկին վարչական տարածաշրջաններից 2015թ. սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Ամասիայի տարածաշրջանում՝ 73.6 %, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 85.4 %, կամ 2014 թվականի հանդեպ սեփական եկամուտների նվազումը տոկոսային առումով կազմել է 11.8%:

Մարզի քաղաքային համայնքները 2015թ. սեփական եկամուտները կատարել են՝ **Գյումրի** քաղաքը՝ 96.9%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 104.3 %, կամ 7.4%-ի նվազում, **Արթիկ** քաղաքը՝ 102.5%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 105.0%, կամ 2.5%-ի նվազում, **Մարալիկ** քաղաքը՝ 94.8%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 103.4%, կամ 8.6%-ի աճ:

Նշված համայքների կողքին, սակայն մարզի թվով 79 համայնքներ չեն ապահովել 2015թ. արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 90.8%-ը, իսկ թվով 6 համայնքներ չեն ապահովել սեփական եկամուտների կատարման նույնիսկ 50.0 %-ի ցուցանիշը:

Մարզի համայնքների կողմից բյուջեների եկամուտների հիմնական ցուցանիշ համարվող հողի հարկի հավաքագրման մակարդակը 2015թ. դեկտեմբերի 23-ի դրությամբ կազմել է 84.7%, կամ նախատեսվածից պակաս է հավաքագրվել - 58,205.4 հազ. դրամ: Փաստացի հավաքագրվածի նվազման %-ը 2014թ. համեմատությամբ կազմել է 9.2%-ով, իսկ գումարային նվազումը կազմում է 32,567.0 հազ. դրամ:

Մարզի համայնքների կողմից բյուջեների եկամուտներում նախատեսված գույքահարկի հավաքագրման մակարդակը 2015թ. դեկտեմբերի 23-ի դրությամբ կազմել է 93.0%, կամ նախատեսվածից պակաս է հավաքագրվել 50,393.8 հազ. դրամ: Փաստացի հավաքագրվածի աճի %-ը 2014թ. համեմատությամբ աճել է 0.4%-ով, իսկ գումարային աճը կազմում է 2,494.6 հազ. դրամ:

2015թ. ընթացքում հողերի վարձավճար կատարվել է 86.0% -ով, կամ պակաս է գանձվել – 38,308.8 հազ.դրամ:

Առանձին համայնքների ղեկավարների կողմից մշտապես չի ապահովվում սեփական եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ, այդ համայնքներն են՝ Բենիամին՝ 49.7%, Սարակապ 32.9%, Վարդաղբյուր 44.8%, Մեղրաշատ 47.3%, Կարմրավան՝ 48.0% և այլն /տես հավելված 2/:

Համայնքների ղեկավարները առանձնակի ուշադրություն պետք է դարձնեն հողի հարկի և հողի վարձակալական վճարների գծով եկամուտների ապահովման նոր մոտեցումների ձևավորմանը, որոնք ենթադրում են համայնքների կողմից օրենսդրությամբ իրենց վերապահված իրավունքների և պարտականությունների առավել խիստ և արդյունավետ կիրառմանը:

Մարզպետարանը հարկերի հավաքագրման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի համակողմանի աջակցություն ցուցաբերի համայնքների ղեկավարներին՝ սեփական եկամուտների հավաքագրման գործում: Սակայն առանձին համայնքներում խրոնիկ ձևով չի ապահովվում եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ:

2015թ. մարզի համայնքներին ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան հատկացվել է ամբողջությամբ, այն կազմում է 4,168.405.2 հազ. դրամ:

Նվազագույն աշխատավարձի բարձրացման և էլեկտրաէներգիայի, գազի գների բարձրացման հետևանքով ՀՀ պետական բյուջեից մարզի համայնքներին 2015 թվականի ընթացքում հատկացվել է 283.095.0 հազ. դրամ:

ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին 2015 թվականին հատկացվել է 450.000,3 հազ. դրամ դրամաշնորներ, որից կապիտալ ծախսերի համար 51.000,0 հազ. դրամ և ընթացիկ ծախսերի համար 357.000,0:

2016 թվականի տրամադրվելիք դոտացիաների մասին

ՀՀ պետական բյուջեով 2016 թվականին նախատեսվել է տրամադրելու 4,379.618.1 հազ. դրամ դոտացիա, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 211,212.9 հազ. դրամով:

Ընդհանուր առմամբ թվով 78 համայքներում գրանցվել է դոտացիայի աճ, իսկ թվով 11 համայնքում նվազում:

2. Մարզում պետական բյուջեի և այլ ֆինանսական միջոցներով իրականացված շինարարական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ՝ Ալբերտ Մարգարյան

2015թ. պետական բյուջեի և այլ ֆինանսական միջոցների հաշվին ՀՀ Շիրակի մարզում քաղաքաշինության բնագավառում իրականացված աշխատանքների մասին

2015թ. պետական բյուջեի և այլ ֆինանսական միջոցների հաշվին ՀՀ Շիրակի մարզում քաղաքաշինության բնագավառում իրականացվել են նախատեսված շուրջ 15.0մլրդ դրամ գումարի աշխատանքներից 13.1մլրդ դրամ գումարի աշխատանքներ: Մնացած 2.0 մլրդ դրամի աշխատանքները փոխանցվել են 2016 թվական:

- ՀՀ Շիրակի մարզպետարանի պատվիրատվությամբ ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին մարզում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ ՀՀ կառավարության 02.07.2015թ. N 766-Ն որոշմամբ հատկացվել էր 530.00 մլն. դրամ գումար, որի շրջանակներում իրականացվել են 390.2 մլն դրամի շինարարական աշխատանքներ այդ թվում՝
- 3 կրթական օբյեկտների (դպրոցներ) մասնակի վերանորոգման և ջեռուցման համակարգի անցկացման,
- 1 մշակութային օբյեկտի վերանորոգման,
- 2 համայնքային կենտրոնների տանիքների վերանորոգման,
- 1 առողջապահական օբյեկտի վերանորոգման ,
- 1 համայնքում ոռոգման ջրագծի մասնակի վերանորոգման,
- 10 ավտոճանապարհների (փողոցների) հիմնանորոգման աշխատանքներ:

138.91 մլն դրամ գումարի սուբվենցիա է տրամադրվել համայնքներին, այդ թվում՝

- 14 համայնքներում համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման,
- 1 համայնքում հակակարկտային կայանի ձեռք բերման,
- 10 համայնքներում մանկապարտեզների սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման,
- 7 համայնքում Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ-ի կողմից խմելու ջրի ջրագծերի կառուցման աշխատանքների համաֆինանսավորման,
- 11 համայնքներում հունիսի 8-9-ին քամուց տուժած ընտանիքներին աջակցություն ցուցաբերելու,
- Պեմզաշենի համայնքում փլուզված բնակելի շենքի թվով 7 ընտանիքներին բնակարանների ձեռք բերման համար աջակցության ցուցաբերման,
- 9 համայնքներում ներհամայնքային փողոցների վերանորոգման,
- <<Գյումրու Ծննդատուն>> ՓԲԸ-ին ֆինանսական աջակցության ցուցաբերման նպատակով:

U/թ նոյեմբերի 13ից-14-ը ընկած ժամանակահատվածում քամուց տուժված ընտանիքներին աջակցություն ցուցաբերելու նպատակով թվով 11 համայնքներին տրամադրվեց 6.3 մլն դրամ գումար ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 19-ի N1361-Ն որոշմամբ:

ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ 24.0 մլն դրամ գումարի շրջանակներում իրականացվել են Սպանդարյանի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքները:

Երկրաշարժի պատճառած վնասների վերականգնման նպատակով 2014թ. ՀՀ պետական բյուջեից հատկացված 1500.0 մլն. դրամի շրջանակներում Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար իրականացվող ԲԳՎ տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրիI 1–ին փուլի շրջանակներում վկայագրեր ստացած թվով 223 ընտանիքներից թվով 207-ը ձեռք են բերել բնակարաններ:

ՀՀ կառավարության 19.11.2015թ. N1363-Ն որոշման համաձայն ԲԳՎ տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի I-ին փուլի իրականացման նպատակով ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացված 1500,0 մլն. դրամից 2015 թվականին տնտեսված 85,4 մլն. դրամ գումարի հաշվին 2015 թվականի դեկտեմբեր ամսին ծրագրի II փուլի շահառուներից թվով 14 ընտանիքների տրամադրվել են բնակարանի գնման վկայագրեր՝ բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու նպատակով:

ՀՀ կառավարության 19.11.2015թ. N1363-Ն որոշման համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի գյուղական համայնքներում հաշվառված և ՀՀ քաղաքաշինության նախարարի համապատասխան հրամաններով մեկ սենյականոց բնակարանի շահառու ճանաչված անձանց համար իրականացվող բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում թվով 2 քաղաքացիների տրամադրվել է պետական ֆինանսական աջակցություն՝(3մլն դրամ) բնակարանային պայմանները բարելավելու նպատակով:

ՀՀ կառավարության 06.08.2015թ. N906-Ն որոշման համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում բնակվող բազմազավակ /9 և ավելի երեխաներ ունեցող/, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող թվով 8 ընտանիքների տրամադրվել են բնակարանի գնման վկայագրեր, որոնցից 7-ը արդեն իսկ ձեռք են բերել բնակարան:

Գյումրի քաղաքում <<Մուշ-2>> թաղամասում 2010թ. շահագործման հանձնված 1056 բնակարաններից սեփականաշնորհվել են 918 բնակարան, իսկ <<Մուշ-2-2>> և <<Անի>> թաղամասերում 2012թ. շահագործման հանձնված 1756 բնակարաններից սեփականաշնորհվել են 995 բնակարան (գործընթացը շարունակվում է): Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում Ամերիկյան Կարմիր խաչի, Հանթսման մարդասիրական բնակարանային շինարարության ծրագրի, ՀՀ պետական բյուջեի և Լինսի հիմնադրամի ֆինանսական միջոցներով կառուցված բնակարանների սեփականաշնորհման գործընթացի շրջանակներում հատկացված բնակարաններն անհատույց համատեղ սեփականության իրավունքով քաղաքացիներին տրամադրելու նպատակով կայացվել է ՀՀ Շիրակի մարզպետի թվով 26 որոշում: ՀՀ Շիրակի մարզպետի և քաղաքացիների միջև կնքվել են պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ թվով 35 պայմանագրեր:

ՀՀ ԿԱ Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ՇԻԳ ՊՀ-ի (ԻՖԱԴ) Գյուղական կարողությունների ստեղծում ծրագրի շրջանակներում 1.3 մլրդ դրամ գումարով իրականացվում են Ջրափիի, Արևիկի, Անիպեմզայի, Բագրավանի, Հայկաձորի, Շիրակավանի համայնքներում ջրամատակարարման համակարգերի վերանորոգման և

Սառնաղբյուրի համայնքի գազաբաշխիչ ցանցի ընդլայնման աշխատանքները (Ավարտը 2016 թվականի հունիսի 1-ը):

- *Գերմանական զարգացման վարկային բանկի աջակցությամբ իրականացվել են ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերանորոգման ծրագրի երկրորդ փուլի աշխատանքները (1.45 մլրդ դրամ):*

- *Տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ իրականացվում են Վարդաքարի դպրոցի կառուցման աշխատանքները (186.0 մլն դրամ):*

- *Ընթացքի մեջ է Կրասար համայնքի դպրոցի կառուցման աշխատանքների կապալառու կազմակերպության ընտրության մրցույթը:*

- *Շահագործման հանձնվեց <<Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա>> ՓԲԸ-ի շենքը (150.0 մլն. դրամ):*

- *Շահագործման են հանձնվել նաև Գեոֆիզիկայի ինստիտուտի Գյումրու 3-րդ , 1-ին և Ամասիայի արհեստագործական ուսումնարանների շենքերը:*

- *Շահագործման հանձնվեց Գյումրիում <<Դ-Լինկ Ինտերնեյշնլ>> գիտահետազոտական կենտրոնի շենքը (217.0 մլն դրամ):*

- *Շահագործման հանձնվեց Գյումրիում <<Էմիլի արեգակ>> բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների կենտրոնը (1.250 մլրդ դրամ):*

- *Ընթացքի մեջ է Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն՝ ՊՈԱԿ-ի «Շիրակ» վարչական մասնաշենքի կապիտալ վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքները (610.5 մլն դրամ):*

- *Անհատ ներդնողների ֆինանսական միջոցների հաշվին իրականացվել են շուրջ 5.3 մլրդ դրամ գումարի աշխատանքներ և այլն:*

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

1. ՀՀ Շիրակի մարզում 119-ը համայնքներից միչև օրս գազաֆիկացված չեն 59-ը համայնքներ: 2015թ հոկտեմբերի 7-ին ՀՀ Նախագահի մոտ կայացած խորհրդակցության ընթացքում քննարկվել է գյուղերի գազաֆիկացման խնդիրը և հանձնարարվել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ խնդիրը առաջիկա տարիներին լուծելու ուղղությամբ: Այդ նպատակով ՀՀ Շիրակի մարզպետարանում համապատասխան համայնքների ղեկավարների հետ քննարկվել է գազաֆիկացումից հետո բնակիչների բաժանորդ դառնալու հնարավորությունները: ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից կատարվել են հաշվարկներ թվով 16 համայնքների գազաֆիկացման վերաբերյալ և առաջարկությունը ներկայացվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն:
2. ՀՀ Շիրակի մարզում հրատապ խնդիր է նաև Ախուրյանի համայնքի թվով 3 կիսակառույց բազմաբնակարան բնակելի շենքերը ավարտին հասցնելու, ինչպես նաև թվով 20 գյուղական համայնքների 170 անօթևան ընտանիքների բնակարանային հարցը:
3. Լուրջ հիմնախնդիրներ են վթարային շենքերի ամրացման (118-ը մարզում, 88 Գյումրի քաղաքում), ինչպես նաև որոշ դպրոցներում, մշակույթի տներում, մանկապարտեզներում, գյուղապետարաններում վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքների իրականացումը:
4. Մարզի 461.1 կմ տեղական նշանակության ճանապարհներից խիստ վերանորոգման կարիք ունեն 112կմ երկարությամբ ճանապարհները:

3. 2015 թվականին գյուղատնտեսության ոլորտում կատարված աշխատանքների մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան

2015 թվականին մարզի շուրջ 29000 գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում ցանված ընդհանուր գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ունեն հետևյալ պատկերը.

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերը մարզի տնտեսություններում.

հ/հ	**Մշակաբույսի անվանումը**	**Ցանքատարածություն /հա/**		**Աճ կամ պակաս /հա/**
		2014թ.	**2015թ.**	
	Հացահատիկ	43913	46665	**+ 2752**

	Այդ թվում՝ աշնանացան ցորեն	24387	26436	**+ 2049**
	գարնանացան գարի	19526	20229	**+ 703**
	Կարտոֆիլ	4268	4384	**+ 116**
	Բանջարեղեն	1698	1729	**+ 31**
	Կերային մշակաբույսեր	13733	14532	**+ 799**
	Տեխնիկական մշակաբույսեր	34	91	**+ 57**
Ընդամենը		**63646**	**67401**	**+ 3755**

Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են շուրջ **3755** հա-ով: Մարզում ընդհանուր ցանքը 2015թ. կազմել է **67401** հա, նախորդ տարվա **63646** հա-ի դիմաց:

2016թ. բերքի տակ ցանվել է **27343 հա** աշնանացան ցորեն՝ **աճ 907 հա**, կատարվել է ցրտահերկ **13952 հա**:

Բերքահավաքի ամփոփ տվյալների համեմատականը 2014-2015թթ. ունի հետևյալ տեսքը.

h/h	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Միջին բերք /գ/		Համախառն բերք /տ/		**Համախառն բերքի աճ /տոննա/**
		2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.	
1.	Հացահատիկ	43913	46665	31.1	32.3	121133	150938	**29805**
2.	Կարտոֆիլ	4268	4384	251	260.3	107506	114023	**6517**
3.	Բանջարեղեն	1698	1729	312	319.4	52953	55236	**2283**
4.	Պտուղ	502	505	179.2	188	9023	9531	**508**
5.	Խոտ	-	-	-	-	125000	134978	**9978**
Ընդամենը								**49091**

Բուսաբուծության բնագավառում ստացված արտադրանք՝

2015թ. **59.2** մլրդ դրամ

2014թ. **55.3** մլրդ դրամ

Աճ՝ 3.9 մլրդ դրամ

«Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիր».

2015թ. բարձր վերարտադրության (սուպեր էլիտա)

ՀՀ Կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1001-Ն որոշմամբ ընդունված <<Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրով>> 2015 թվականին ՀՀ Շիրակի մարզի ֆերմերային տնտեսություններին հատկացվել է.

սերմացու 24 տոննա
հողատարածք 96 հա
շահառուներ 8

2015թ. առաջին վերարտադրություն.

ՀՀ Կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1001-Ն որոշմամբ ընդունված <<Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրով>> 2015 թվականին ՀՀ Շիրակի մարզի 0.4-3 հա հողատարածք ունեցող գյուղացիական տնտեսություններին հատկացվել է.

սերմացու 1230 տոննա
համայնք 64
հողատարածք 4100 հա
շահառուներ 2371

Համայնքների կողմից լուրջ թերացում է արձանագրվել 2012-2013թթ., 2013-2014թթ. և 2014-2015թթ. առաջին վերարտադրության ցորենի սերմացուի գումարների հավաքագրման ուղղությամբ՝

2012-2013թթ. – Մարմաշեն 836 000 դրամ, Զույգաղբյուր 1 232 000 դրամ, Ողջի 2 000 000 դրամ, Սարակապ 193 000 դրամ:

2013-2014թթ. – Մարմաշեն 856 000 դրամ, Իսահակյան 4 800 000 դրամ, Սարակապ 360 000 դրամ, Լուսաղբյուր 2 077 000 դրամ, Աղին 296 000 դրամ:

2014-2015թթ. – Ախուրյան 13 524 000 դրամ, Հայկավան 2 590 000 դրամ, Հովունի 3 180 000 դրամ, Զույգաղբյուր 800 000 դրամ, Արեգնադեմ 1 280 000 դրամ, Իսահակյան 7 208 000 դրամ, Սարակապ 1 600 000 դրամ, Լուսաղբյուր 4 098 000 դրամ, Աղին 3 270 000 դրամ:

Հայաստանի Հանրապետության 2015 թվականի գարնանացանի համար իրականացված աջակցության ծրագրեր.

	տոննա	հա	շահառու
գարնանացան գարի	190	950	562
առվույտ	1	40	39
կորնգան	64.9	432.6	382

2015թ. <<Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> ծրագիր.

2014-2015թթ. ծրագիրը ավարտվել է **7** համայնքներում՝ **Սարալանջ, Արևշատ, Նահապետավան, Ծաղկուտ, Հոռոմ, Գուսանագյուղ, Գտաշեն**: Ձեռք է բերվել **13** միավոր գյուղ. տեխնիկա իրենց գյուղ. գործիքներով, իրականացվել է **29300 գծամետր** արոտների ջրարբիացում:

Աջակցության ծրագրեր.

<<ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության>> ծրագրի շրջանակներում 2015թ. մարզին հատկացվել է **5252.5** տ ազոտական պարարտանյութ, որի գումարը կազմում է **630.3** մլն դրամ, հավաքագրվել է 628.13 մլն դրամ, պարտքը կազմում է, **2.17 մլն դրամ՝ Բենիամին-960000 դրամ, Սարակապ-768000 դրամ, Մեղրաշատ-444000 դրամ: Նշված գումարների հավաքագրման վերջնաժամկետ էր սահմանված ս/թ նոյեմբերի 1-ը,** սակայն մինչև այսօր նշված համայնքների կողմից վճարումներ չի իրականացվել:

<<ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով կալիումական և ֆոսֆորական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության>> ծրագրի շրջանակներում մարզի համայնքների կողմից գնվել է **14.55** տ ֆոսֆորական և **26.3** տ կալիումական պարարտանյութեր, որի ընդհանուր գումարը կազմում է **5719000** դրամ, գումարներն ամբողջությամբ հավաքագրված են:

<<ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վեռալանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության>> ծրագրի շրջանակներում 2015թ. մարզի համայնքների կողմից գնվել է **633164** լիտր դիզելային վառելանյութ, որի գումարը կազմում է **221607400** դրամ, գումարներն ամբողջությամբ հավաքագրված են:

Հակակարկտային միջոցառումներ.

2015թ. կարկտահարության պատճառով տուժել են մարզի թվով 29 համայնքների գյուղացիական տնտեսությունների գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները՝ 20 %-ից մինչև 80 % 3783 հա, վնասի չափը կազմել է 739.477 մլն դրամ, նախորդ տարվա 3.359572 մլրդ դրամի դիմաց:

Մարզում 2015թ. ընթացքում տեղադրվել են 4 հակակարկտային կայանքներ՝ Անուշավան - 3, Քեթի - 1:

Այժմ մարզի **24** համայնքներում տեղադրված են ընդհանուր թվով **60** հակակարկտային կայանքներ:

2015թ. ընթացքում բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի պլանով նախատեսված միջոցառումները իրականացվել է ամբողջությամբ:

Ոռոգում.

Ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքներն իրականացվել են ժամանակին, ջրօգտագործողների հետ կնքվել են 11980 պայմանագիր 9560 հա ոռոգելու համար: Պլանավորվել է 26000 հազ. մ³ ջրառ և 13170 հազ. մ³ ջրտուք, 2015թ. ոռոգման ջրի վարձավճարների գանձումը հասցվել է մինչև 86 % 24.12.2015թ. դրությամբ:

<<Շիրակ>> ՋՕԸ-ի 2014-2015թթ. ջրառը, ջրտուքը և գանձումները 24.12.2015թ. դրությամբ հետևյալն են.

«Շիրակ» ՋՕԸ	Ստացված ջուրը հազ. մ³		Հասույթը հազ. դրամ		Գանձված է հազ. դրամ		Պարտքը հազ. դրամ		**Գանձման %-ը**	
	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.
Ընդամենը՝	9889	9929,1	108779	109220,1	102303,5	93929.3	6475,5	15290.8	94	86

Ընդհանուր վճարումների տոկոսը կազմում է 86 % նախորդ տարվա 94%-ի դիմաց: 2015թ. ջրառից ստացվել է 19.8 մլն մ³ ջուր, նախորդ տարվա 19.5 մլն մ³ ջրի դիմաց:

Ջրամբարների լցվածությունը 24.12.2015թ. դրությամբ՝

h/h	**Ջրամբարի անվանումը**	**Ծավալը մլն մ³**	**Լցվածությունը առ 24.12.2014թ. մլն մ³**	**Լցվածությունը առ 24.12.2015թ. մլն մ³**
1	**Ախուրյան**	540	61.11	146.45
2	**Արփի լիճ**	105	8.5	12.5
3	**Կառնուտ**	22.6	4.25	9.38
4	**Սառնաղբյուր**	4.8	0.31	0.31
5	**Վարդաքար**	5	0.46	0.91
6	**Թավշուտ**	6	0.57	0.45
7	**Մանթաշ**	8.2	1.17	1.89
8	**Ջաջուռ**	0.28	0.16	0.18
ԸՆԴԱՄԵՆԸ՝		**151.88**	**15.42**	**25.62**

Լցվածությունը 24.12.2014-24.12.2015թթ. հանրագումարը հաշվարկված է առանց Ախուրյանի ջրամբարի:

Անասնապահություն.

2015թ. հունվարի 1-17-ը անցկացվել է գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր տնտեսություններում և առևտրային կազմակերպություններում առկա անասունների հաշվառում, որի արդյունքները ամփոփ տեսքով բերվում է ստորև ներկայացվող աղյուսակում /2014-2015թթ. արդյունքների համեմատականով/.

	Խ.ե.կ. /հազ. գլուխ/		**Որից՝ կովեր** /հազ. գլուխ/		**Խոզեր** /հազ. գլուխ/		**Ոչխարներ և այծեր** /հազ. գլուխ/		**Թռչուններ** /հազ. թև/	
	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.
	107.097	107.847	50.567	50.603	13.81	12.87	90.4	90.527	188.757	216.682
աճ/նվազում	**+ 0.75**		**+ 0.036**		**- 0.94**		**+ 0.127**		**+ 27.925**	

ՀՀ Շիրակի մարզում անասնաբուծական հիմնական մթերքների արտադրության 2014-2015թթ. համեմատական ցուցանիշները.

Անասնաբուծական մթերք	**2014թ. համախառն արտադրանքը**	**2015թ. համախառն արտադրանքը**	**Համախառն արտադրանքի աճ կամ նվազում (+/-)**
Միս /հազ. տ/	22	22.9	**+ 0.9**
Կաթ /հազ. տ/	110.5	112.5	**+ 2**
Ձու /մլն հատ/	39.9	41.7	**+ 1.8**

Անասնապահական մթերքների իրացումից ստացված համախառն եկամուտը՝
2015թ. **57.3** մլրդ դրամ
2014թ. **53.6** մլրդ դրամ
Աճ 3.7 մլրդ դրամ
Գյուղատնտեսական մթերքների իրացումից ստացված համախառն եկամուտ.
2015թ. **116.5** մլրդ դրամ
2014թ. **108.9** մլրդ դրամ
Աճ 7.7 մլրդ դրամ

Տարեվերջյան մարզային խորհրդի նիստի ժամանակ ամփոփիչ ելույթով հանդես եկավ Շիրակի մարզպետ Ֆելիքս Ցոլակյանը:

Անդրադառնալով հարկերի հավաքագրման ցուցանիշներին մարզպետը նշեց, որ այս տարի դրական տեղաշարժ կա, սակայն անելիքներ ևս դեռ կան, այս առումով մարզի մի շարք համայնքապետեր թերացել են աշխատանքում: <Ես չեմ ուզում ձեր նախատոնական տրամադրությունը փչացնել, միայն ուզում եմ ասել, որ ժամանակ կա մինչև տարեվերջ, հնարավորություն ունեք ուղղելու վիճակը, քանզի այդ վճարումները պետք են ձեր համայնքներին>,-նշեց Ֆելիքս Ցոլակյանը:

Մարզպետը 2015 թվականը ձեռքբերումների տարի համարեց հատկապես քաղաքաշինության բնագավառում, ընդգծելով, որ 2016թվականին առավել լայնածավալ աշխատանքների են իրականացվելու. <Մենք այս տարի բավական ծավալուն քաղաքաշինական ծրագրեր իրականացրեցինք, մի շարք օբյեկտներ հանձնվեցին շահագործման, իսկ սպասելիքները գալիք տարուց առավել մեծ են>: Ֆելիքս Ցոլակյանը խոսեց Գյումրիին տրամադրվելիք 23մլն եվրո վարկի մասին. <Ես ուզում եմ շնորհակալություն հայտնել ՀՀ նախագահին, ՀՀ կառավարությանը այս վարկի տրամադրման հարցում աջակցելու, Գյումրիի խնդիրների լուծմանն ուղղված ջանքերի համար>,-ասաց նա:

Անդրադառնալով Հյուսիս-Հարավ ճանապարհի կառուցման աշխատանքներին մարզպետն ընդգծեց, որ 2016-ին կմեկնարկեն Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի նորոգման աշխատանքները: <Ճանապարհաշինական այս ծրագրով բավական գումարներ են նախատեսված, սա նշանակում է և ներդրումներ, և նոր աշխատատեղերի բացում: Ընդհանրապես քաղաքաշինական բազմաթիվ ծրագրերի մեկնարկը մարզում նպաստելու է նոր աշխատատեղերի ստեղծմանն, ինչն իսկապես չափազանց կարևոր հանգամանք է մեր մարզի համար>,-ասաց Շիրակի մարզպետը: Նա խոսեց մի շարք այլ ծրագրերի, արված և սպասվելիք աշխատանքների մասին:

Ավարտին Ֆելիքս Ցոլակյանը շնորհավորեց ներկաների ու մարզի ողջ ազգաբնակչության գալիք Նոր տարին՝ մաղթելով հաջողություններ, ձեռքբերումներ գործնական ու անձնական կյանքում, կենսապայմանների բարելավում, ամենայն բարիք:

Մարզի խորհրդի նիստի ավարտին, ավանդույթի համաձայն տեղի ունեցավ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների շնորհավորանք և հյուրասիրություն ՀՀ Շիրակի մարզպետի անունից: